ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 121-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 11 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին *որոշում է.*

Հաստատել Արենի համայնքի ավագանու 31-ը հոկտեմբերի 2022 թվականի թիվ 11 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 31-ը հոկտեմբերի 2022 թվականի թիվ 11 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենի համայնքի 2022թվականի տարեկան բյուջեի եկամտային մասում ավելացում, ծախսային մասում հոդվածային վերաբաշխումներ կատարելու և վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացում կատարելու մասին:

3. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող <<Ձաբուրյան գրուպ>> ՍՊԸ-ին պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

4. Արենի համայնքի մանկապարտեզների հետագա գործունեության մասին:

5. Արենի համայնքի ավագանու 08.07.2022թվականի թիվ 68-Ա որոշման 1.8 և 1.10 կետերը ուժը կորցրած ճանաչելու և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից մրցույթով, վարձակալությամբ տրամադրելու մասին:

6. Սույն թվականի նոյեմբերի 4-ից 6-ը Արաբական Միացյալ էմիրությունների Դուբայ քաղաքում կայանալիք «Որակի Նշան 2022» մրցանակաբաշխությանը Արենի համայնքի ղեկավարի մասնակցությունը ապահովելու նպատակով՝ մատուցվող ծառայությունների դիմաց 2023թվականի 1-ին կիսամյակում գումար հատկացնելու մասին:

7. Արենի համայնքում 2022թվականին սուբվենցիոն ծրագրերով իրականացվող շինարարական աշխատանքների պայմանագրերի ժամկետները երկարաձգելու և աշխատանքները 2023թվական տեղափոխելու մասին:

8. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի բնակիչ Կարմեն Գևորգի Կարապետյանի դիմումը քննարկելու և դրական աջակցություն ցուցաբերելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 122-Ն

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2022ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄ, ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1.ՀՀ պետ. բյուջեի ընթացիկ ծախս սուբվենցիա Արենի 37բաժնի 41 խմբի 00 դասի եկամտատեսակում՝ համաձայն Արենիի համայնքապետարանի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության Եղեգնաձորի տարածքային կենտոնի թիվ ԱՀ-ՎՀԱ-2-653-2022 առ 25.10.2022թ պայմանագրի /վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման ծրագիր/ ավելացնել 1 800 000 ՀՀ դրամ և նշված գումարը ուղղել.

ա/ Կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 01 դասի 4111 /աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ/ հոդվածին 1 440 000 ՀՀ դրամ,

բ/ ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 01 բաժնի 06 խմբի 01 դասի գործառնական դասակարգման 4637 /ընթացիկ դրամաշնորհներ պետական և հայանքային ոչ առևտրային կազմակերպություններին/ հոդվածին 360 000 ՀՀ դրամ:

2.ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 01 բաժնի 06 խմբի 01 դասի 4239 / ընդհանուր բնույթի այլ ծառայություններ / հոդվածից պակասեցնել 6395000 ՀՀ դրամ և նշված գումարը ուղղել

ա/ նույն ոլորտի 4622 /կապիտալ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին/ հոդվածին 755000 ՀՀ դրամ,

բ/ Արենիի համայնքապետարանի պահուստային ֆոնդ գործառական դասակարգման 11 բաժնի 01խմբի 02 դասի 4891 /պահուստային միջոցներ/ հոդվածին՝ 5640000 ՀՀ դրամ

Արենի համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ 11 բաժնի 01 խմբի 02 դասի գործառնական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածին կատարել հատկացում ֆոնդային բյուջե՝ 5640000 ՀՀ դրամի չափով: Ֆոնդային բյուջեում ավելացվա 5640000 ՀՀ դրամը ուղղել

ա/01-06-01 ընդանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 5112 /շենքերի և շինությունների շինարարություն / հոդվածին՝ 2300000 ՀՀ դրամ,

բ/01-06-01 ընդանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 5134/նախագծահետազոտական ծախսեր/հոդվածին՝ 1300000 ՀՀ դրամ,

գ/արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում դասակարգման 06 բաժնի 04 խմբի 01 դասի 5112 / շենքերի և շինությունների շինարարություն / հոդվածին՝ 2040000 ՀՀ դրամ:

3. Ճանապարհային տրանսպորտ գործառնական դասակարգման 04 բաժնի 05 խմբի 01 դասի 5112 /շենքերի և շինությունների շինարարություն / հոդվածից պակասեցնել 12000000 ՀՀ դրամ և նշված գումարը ուղղել արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում դասակարգման 06 բաժնի 04 խմբի 01 դասի 5112 / շենքերի և շինությունների շինարարություն / հոդվածին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 123-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՁԱԲՈՒՐՅԱՆ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 0.13797ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 7-րդ հոդվածի 15-րդ մասի, ՀՀ կառավարության 17.06.2021թվականի թիվ 987-Ն որոշմամբ սահմանված կարգի 1-ին մասի 14-րդ կետի պահանջներով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, <<Ձաբուրյան գրուպ>> ՍՊԸ-ին պատկանող 0.13797հա (ծածկագիրը՝ 10-006-0253-0021, գործառնական նշանակությունը խոտհարք) գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա, արտադրական օբյեկտների գործառնական նշանակության՝ գինու գործարան կառուցելու նպատակով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՁԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 124-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 2022թվականի տարեկան բյուջեով նախատեսված գումարները բավարար չեն մանկապարտեզներում բավարար ջերմաստիճան ապահովելու համար, Արենի համայնքի ավագանի ***որոշում է***

1. Առաջարկել Արենի համայնքի ղեկավարին ոչ բավարար ջերմաստիճանի պահպանման դեպքում ժամանակվորապես դադարեցնել համայնքային ենթակայության մանկապարտեզների գործունեությունը:

2. Բոլոր աշխատակիցներին ազատել աշխատանքից՝ բացառությամբ տնօրենի և հաշվապահի, որոնց օրենքով սահմանված կարգով վճարել պարապուրդ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 125-Ա

. ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08.07.2022ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 68-Ա ՈՐՈՇՄԱՆ 1.8 և 1.10 ԿԵՏԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ և ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի պահանջներով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Ուժը կորցրած ճանաչել Արենի համայնքի ավագանու 08.07.2022թվականի <<Արենի համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերից աճուրդ վաճառքով օտարելու մասին>> թիվ 68-Ա որոշման 1.8 և 1.10 կետերը:

2. Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող .

2.1 0.11677 հա (ծածկագիրը՝ 10-012-0147-0009, գործառնական նշանակությունը վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը մրցույթով, 25 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 3 000 ՀՀ դրամ:

2.2 0.16766 հա (ծածկագիրը՝ 10-012-0147-0006, գործառնական նշանակությունը վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը մրցույթով, 25 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 4 000 ՀՀ դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 126-Ա

ՍՈՒՅՆ ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4 -ԻՑ 6-Ը ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈՒԲԱՅ ՔԱՂԱՔՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ «ՈՐԱԿԻ ՆՇԱՆ 2022» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆԸ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ 2023ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Սույն թվականի նոյեմբերի 4 -ից 6-ը Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքում կայանալիք «Որակի Նշան 2022» մրցանակաբաշխությանը Արենի համայնքի ղեկավարի մասնակցությունը ապահովելու նպատակով, մատուցվող ծառայությունների դիմաց վճարումները կատարել 2023թվականի առաջին եռամսյակում՝ ըստ նախապես կնքված պայմանագրի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 127-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2022ԹՎԱԿԱՆԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ 2023ԹՎԱԿԱՆ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 2022թվականի համար նախատեսված հիմնական միջոցների օտարումներից ակնկալվող եկամուտները չեն կատարվել և որ 2022թվականին կատարվել են չնախատեսված բազմաթիվ հրատապ այլ ծրագրեր, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Առաջարկել Արենի համայնքի ղեկավարին.

1. Արենի համայնքում 2022թվականի սուբվենցիոն ծրագրերով իրականացավող շինարարական աշխատանքների կապալառու կազմակերպությունների հետ կնքել համաձայնագրեր, ըստ որի շինարարական աշխատանքները կատարվում են ամբողջությամբ, բայց վճարումները կատարվում են 2023թվականին, կամ աշխատանքների կատարման ժամկետները երկրաձգվում են մինչև 2023թվականի առաջին կիսամյակի վերջ:

2. Դիմել ՀՀ կառավարություն սահմանված կարգով սուբվենցիոն շրագրերով իրականացված և ավարտված շինարարական աշխատանքների մասով կառավարության մասնաբաժինը վճարելու խնդրանքով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 128-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԿԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Հարգել Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի բնակիչ Կարմեն Գևորգի Կարապետյանի դիմումը և հատկացնել միանվագ դրամական աջակցություն 50 000 ՀՀ դրամի չափով՝ հիվանդ ամուսնու հիվանդանոցային ծախսերը հոգալու նպատակով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ